ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2012)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2012 թվականի փետրվար 7-ի նիստի «2012 թվականի փետրվարի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2012 թվականի փետրվարի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ 455
Իրական հատվածի ցուցանիշներ 458
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 461
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 466
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 467
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 478
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոփ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 495
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 507
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 509
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 514
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (07.02.2012)

2012 թվականի փետրվարի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2012 թվականի փետրվարի 7-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Ա. Ջավադյանը, նախագահի տեղակալ Ն. Երիցյանը, խորհրդի անդամներ Ա. Մկրտչյանը, Ա. Դարբինյանը, Օ. Աղասյանը, Ա. Չիլինգարյանը, Վ. Աբրահամյանը

Խորհրդի նիստը, որը հաջորդեց 2012 թվականի առաջին եռամսյակի Դրամավարկային քաղաքականության ծրագրի հաստատմանը, սկսվեց ընթացիկ զարգացումների ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները: 2012 թվականի հունվարին 12-ամսյա գնաճը կազմել է 4.8%՝ պահպանվելով 4% նպատակային մակարդակի ±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում: Պարենային ապրանքների գների աճի նպաստումը 12-ամսյա ցուցանիշին կազմել է 3.1 տոկոսային կետ:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2012 թվականի հունվարին, նախորդ ամսվա համեմատությամբ, արձանագրվել է 3.6% գնաճ, որի 3.3 տոկոսային կետը պարենային ապրանքների գների 6.2% աճի հետևանք է: Ընդ որում, միայն մրգերի և բանջարեղենի գների աճը հանգեցրել է 3 տոկոսային կետ գնաճի: Ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.4%-ով՝ գնաճի ցուցանիշին նպաստելով -0.06 տոկոսային կետով, իսկ ծառայությունների սակագներն աճել են 0.7%-ով՝ 0.2 տոկոսային կետ նպաստմամբ:

2011 թվականի դեկտեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) կազմել է 6.1%, որից ելնելով հունվար-դեկտեմբեր ամիսների ՏԱՑ-ը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գնահատվել է 5.9%: Ընդ որում, արդյունաբերության ճյուղում, հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, թողարկման ծավալների աճը կազմել է 14.1%, գյուղատնտեսության ճյուղում՝ 14.1%՝ պայմանավորված հիմնականում բուսաբուծության ենթաճյուղի 26.6% և անասնապահության ենթաճյուղի 0.1% աճով: Ծառայությունների ծավալներն ավելացել են 6.1%-ով, առևտրի ծավալները՝ 3.5%-ով: Շինարարության թողարկման ծավալները նշված ժամանակահատվածում նվազել են 11.5%-ով, որի հիմնական պատճառը, ինչպես նշվել է նախկինում, միջազգային վարկերի, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին իրականացվող շինարարության ծավալների կրճատումն է՝ պայմանավորված ինչպես գյուղատնտեսության, ոռոգման և էներգետիկայի ոլորտներում միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ավարտով, այնպես էլ խոշոր ճանապարհաշինական և ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված շինարարական ծրագրերի հետաձգմամբ:

Ինչ վերաբերում է արտաքին ապրանքաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, գրեթե պահպանվել են ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման աճի տեմպերը. 2011 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, արտահանումը (ՖՕԲ) ավելացել է 27.7%-ով, իսկ ներմուծումը (ՍԻՖ)՝ 10.7%-ով:

Ներկայացվեցին նաև ֆինանսական շուկայի զարգացումները. հունվարին շուկայական ռեպո միջին տոկոսադրույքը դեկտեմբերի համեմատությամբ մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 11.42 %, միջբանկային ռեպո տոկոսադրույքն աճել է 0.76 տոկոսային կետով և կազմել 11.00%: Միաժամանակ, մինչև 1 տարի մարման ժամկետով պետական պարտատոմսերի առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատ միջին տոկոսադրույքը նույնպես մնացել է գրեթե անփոփոխ և կազմել 10.64 %:

2012 թ. հունվարին արտարժույթի շուկայում դրամի միջին շուկայական փոխարժեքը նախորդ ամսվա համեմատ դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 1.11 տոկոսով՝ կազմելով 387.53 դրամ, եվրոյի նկատմամբ արժևորվել է 0.86 %-ով՝ կազմելով 500.33 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեզրկվել է 2.17 %-ով՝ կազմելով 12.16 դրամ: Նախորդ տարվա հունվար ամսվա համեմատ դրամի միջին շուկայական փոխարժեքը դրսևորել է հետևյալ միտումները. ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.83 %-ով, եվրոյի նկատմամբ՝ 2.38 %-ով և ՌԴ ռուբլու նկատմամբ՝ 2.17 %-ով:

Ֆինանսական շուկայի նկարագրված զարգացումների պայմաններում դրամավարկային ցուցանիշները հունվարի վերջի դրությամբ արձանագրել են հետևյալ միտումները. 12-ամսյա կտրվածքով դրամային ավանդների 44.2% և կանխիկի 16.7% աճի պայմաններում դրամային զանգվածն ավելացել է 28.4%-ով: Արտարժութային ավանդների 12-ամսյա աճը կազմել է 19.8% (բացառելով փոխարժեքի փոփոխության ազդեցությունը՝ 12.5%)՝ ինչն էլ պայմանավորել է դրամայինի նկատմամբ փողի զանգվածի ավելի դանդաղ աճը՝ 24.5%: Դոլարայնացման մակարդակը այդ ժամանակահատվածում նվազել է 3.8%-ով: Պահպանվել են վարկավորման բարձր աճի տեմպերը՝ 35.1%: Դրամով վարկավորման աճը կազմել է 24.7%:

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Թեև Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների լուծման հետ կապված անորոշությունները և դրանցից բխող ռիսկերը շարունակել են պահպանվել, այնուամենայնիվ հունվարին աշխարհի առաջատար արդյունաբերական երկրներում՝ ԱՄՆ-ում, Գերմանիայում և Չինաստանում արձանագրվեցին արդյունաբերական արտադրության ինդեքսների դրական գնահատականներ: Այս պայմաններում հիմնական հումքային և արդյունաբերական ապրանքների միջազգային գներն արձանագրեցին թույլ գնաճային միտումներ: Նավթի գների զարգացումներին, բացի արդյունաբերական պահանջարկի աճից, նպաստեցին նաև Իրանի և արևմուտքի երկրների (Եվրոգոտի, ԱՄՆ) միջև շարունակվող հակասությունների սրումը: Պարենային ապրանքների շուկաներում գները հունվարին արձանագրեցին որոշակի աճ (FAO-ի ինդեքսն աճել է 1.9%-ով): Ցորենի գների աճին նպաստեցին Արևմտյան և Արևելյան Եվրոպայի ցորեն արտադրող հիմնական երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում և Ուկրաինայում, ցուրտ եղանակային պայմանների պատճառով բերքի հնարավոր կորուստների վերաբերյալ սպասումները:

Տնտեսական ակտիվության որոշակի վերականգնման նախանշանների, ինչպես նաև դրանց՝ դեռևս խոցելի հիմքերի վրա պահպանման պայմաններում Եվրոպական կենտրոնական բանկը և ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը հունվարին զերծ մնացին քաղաքականության տոկոսադրույքների փոփոխությունից, իսկ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգը հանդես եկավ մինչև 2014 թ. ավարտը տոկոսադրույքները ցածր մակարդակում պահպանելու որոշմամբ:

Խորհուրդն արձանագրեց, որ ՀՀ տնտեսությունը զարգանում է Դրամավարկային քաղաքականության ծրագրերում ներկայացված բազային սցենարին համապատասխան: Չնայած համաշխարհային տնտեսության զարգացման առկա անորոշությունների

պահպանմանը՝ առաջատար մի քանի երկրներում արծանագրվել են տնտեսական ակտիվության դրական միտումներ և հիմնական հումքային ու պարենային ապրանքների միջազգային գների թույլ աճ:

ՀՀ տնտեսության բազային սցենարով զարգացումները պահպանում են գնաճային միջավայրի վրա չեզոք ազդեցությունը ինչպես հարկաբյուջետային քաղաքականության և մասնավոր ծախսումների, այնպես էլ աշխատանքի շուկայի կողմից:

Զարգացման հեռանկարում սպասվում է, որ 12-ամսյա գնաճը կանխատեսվող հորիզոնում կգտնվի 4% նպատակային թիրախի ±1.5 տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում:

Տնտեսության զարգացման ներկա միտումների պայմաններում Կենտրոնական բանկը կշարունակի պահպանել քաղաքականության տոկոսադրույքի 8% մակարդակը, որը գնաճային միջավայրի վրա կթողնի չեզոք ազդեցություն:

2012 թվականի փետրվարի 7-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց անփոփոխ թողնել ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8.0%: Լոմբարդային ռեպոյի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները համապատասխանաբար սահմանվել են 11.0% և 5.0%:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2011թ. դեկտեմբեր*	*2011թ. դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2010թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2012թ. հունվար*	*2012թ. հունվարի իրական աճի ինդեքսը 2011թ. հունվարի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	106.1	-	104.4
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	102601.0	116.0	71597.4	121.0
էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	809.8	125.4	764.2	116.9
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	52289.8	102.3	15787.3	100.1
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	308900.2	106.7	105923.6	100.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	87297.5	116.3	8580.1	100.5
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	87296.2	108.7	68275.2	106.7
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	146735 [2]	102.5	113052 [1]	102.5
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1194.7		1162.7	
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	73.9		68.5	
Գործազրկության մակարդակը *(%)*	6.2		5.9	

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2012 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	103.6	99.4	99.5	101.5
2012 թ. հունվարը 2011 թ. հունվարի համեմատությամբ	104.8	106.4	92.8	111.0

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2010*	*2011*	*2012*	*2012*	*2012*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	1.7	3.4 [2]	3.6	3.6	4.8
Փետրվար	0.3	0.9 [2]			
Մարտ	0.8	0.8			
Ապրիլ	1.3	-0.2			
Մայիս	1.0	0.0			
Հունիս	-0.8	-1.4			
Հուլիս	-0.8	-3.0			
Օգոստոս	1.3	-0.6			
Սեպտեմբեր	-0.2	0.8			
Հոկտեմբեր	1.0	0.3			
Նոյեմբեր	1.6	1.2			
Դեկտեմբեր	1.8	2.5			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	9.4	4.7			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	8.2	7.7			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2012թ. հունվարը 2011 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**103.6**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**106.2**	**3.3**
Բանջարեղեն և կարտոֆիլ	143.3	2.71
Միրգ	107.7	0.28
Ծխախոտ	102.5	0.10
Մսամթերք	100.8	0.08
Սուրճ, թեյ, կակաո	101.4	0.05
Ձու	101.9	0.03
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**99.6**	**-0.1**
Կոշկեղեն	97.5	-0.04
Հագուստ և գործվածք	99.1	-0.030
Շինանյութեր	98.1	-0.01
Ծառայություններ, որից՝	**100.7**	**0.22**
Բուժսպասարկման	105.3	0.20
Հանգստի կազմակերպման	108.8	0.06
Հանրային սննդի	101.4	0.03

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[3]

ժամանակաշրջան	2009	2010	2011	2012
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	-0.29	0.48	0.71[4]	0.65
Փետրվար	-0.53	0.74	0.42[4]	
Մարտ	1.14	0.82	0.64[4]	
Ապրիլ	1.46	0.70	0.45[4]	
Մայիս	0.41	0.04	0.32[4]	
Հունիս	0.25	-0.22	0.37[4]	
Հուլիս	-0.22	-0.42	0.21[4]	
Օգոստոս	0.37	0.17	0.27[4]	
Սեպտեմբեր	0.72	0.63	0.42[4]	
Հոկտեմբեր	0.48	1.21	0.36[4]	
Նոյեմբեր	0.62	1.18	0.41	
Դեկտեմբեր	0.61	0.63	0.55	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	4.63	6.20	6.28[4]	5.27
Փետրվար	3.02	7.59	5.75[4]	
Մարտ	3.33	7.14	5.68[4]	
Ապրիլ	3.47	6.35	5.42[4]	
Մայիս	3.37	5.92	5.75[4]	
Հունիս	3.36	5.40	6.32[4]	
Հուլիս	3.20	5.16	6.95[4]	
Օգոստոս	3.52	4.96	7.01[4]	
Սեպտեմբեր	3.71	4.86	7.01[4]	
Հոկտեմբեր	4.16	5.53	6.09[4]	
Նոյեմբեր	4.72	6.16	5.37	
Դեկտեմբեր	5.25	6.26	5.29	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**105.27**
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.59
Տավարի միս	0.42
Խոզի միս	0.36
Կարագ	0.30
Պանիր տնական (կովի կաթից)	0.23
Բենզին	0.23
Կարամել	0.22
Ծխախոտ «Գառնի»	0.18
Օդային տրանսպորտով ուղևորների միջքաղաքային փոխադրման ուղեվարձ	0.18
Հավի բուդ	0.18
Շաքարավազ	0.15
Աղացած սև սուրճ	0.13
Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների, կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ	0.11
Եփած երշիկ	0.09
Բուսական յուղ (արևածաղկի)	0.09
Նրբերշիկ	0.09
Թթվասեր	0.08

[1] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[2] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2011 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2011 թ. հունվար – դեկտեմբերը 2010 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*	*2012 թ. հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2012 թ. հունվարը 2011 թ. հունվարի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1329.5	127.7	71.5	100.4
Ներմուծում *(ՍԻՖ)*	4151.5	110.7	274.4	106.6
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2822.0	104.2	202.9	109.0

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2011 թվական**		
	Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1364892	186441	1178451
ԱՄՆ	138384	145332	-6949
Ուկրաինա	26790	25151	1640
Ղազախստան	23407	2274	21133
Գերմանիա	25601	27604	-2003
Իսպանիա	9891	10142	-252
Ֆրանսիա	18872	24773	-5901
ԱՄԷ	19141	57937	-38797
Չինաստան	3518	83256	-79738
Թուրքիա	6197	36078	-29881
Այլ երկրներ	323341	224558	98783
Ընդամենը	**1960033**	**823547**	**1136486**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	**2012 թվական**		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	65071	11396	53675
ԱՄՆ	8396	7578	818
Ուկրաինա	1195	859	336
Ղազախստան	1488	126	1361
Գերմանիա	1839	2336	-497
Իսպանիա	487	505	-18
Ֆրանսիա	1042	744	298
ԱՄԷ	861	3590	-2729
Չինաստան	127	2219	-2092
Թուրքիա	332	1584	-1252
Այլ երկրներ	14200	13467	733
Ընդամենը	**95037**	**44403**	**50634**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2011 թվական		
	Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	1295163	141352	1153811
ԱՄՆ	74380	27331	47049
Ուկրաինա	25076	16202	8874
Ղազախստան	20611	1769	18842
Գերմանիա	10695	6905	3790
Իսպանիա	7674	3052	4622
Ֆրանսիա	10874	7668	3206
ԱՄԷ	3387	7660	-4273
Չինաստան	529	8748	-8219
Թուրքիա	2136	4981	-2845
Այլ երկրներ	96434	38934	57499
Ընդամենը	**1546959**	**264602**	**1282357**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական		
	Հունվար		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	60706	8530	52175
ԱՄՆ	5119	1499	3620
Ուկրաինա	1038	737	301
Ղազախստան	1088	115	973
Գերմանիա	735	806	-72
Իսպանիա	473	169	305
Ֆրանսիա	668	351	317
ԱՄԷ	274	356	-82
Չինաստան	1	379	-378
Թուրքիա	71	203	-132
Այլ երկրներ	4823	2638	2185
Ընդամենը	**74996**	**15785**	**59212**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒԱՐԺԵՔ[1,2]

2011	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	139.4	137.5	133.3	128.2	127.7	126.2	125.5	125.1	128.3	127.5	126.3	131.6
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	228.0	224.6	218.4	211.6	211.7	211.9	216.5	217.3	221.7	221.0	217.6	221.6
2012	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք (1997=100)	135.5											
Անվանական արդյունավետ փոխարժեք (1997=100)	220.4											

[1] Հաշվարկը կատարվել է ըստ առևտրի ծագման ՀՀ հիմնական 11 գործընկեր երկրների արտաքին առևտրի ընդհանուր ծավալների՝ 2003-2007 թթ. կշիռներով: Հաշվարկում ընդգրկված գործընկեր երկրների գնաճի համար որպես բազիսային տարի վերցվել է 2005 թվականը:

[2] Բոլոր տվյալները ներկայացված ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]


մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012
	Դ [3]	Հ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշահորհման միջոցների)*	**1959.4**	**1820.4**
Համախառն միջազգային պահուստներ	**1959.4**	**1820.4**
Ոսկի	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	57.0	57.6
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0
Արտարժույթ [2]	1902.4	1762.8

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2011	2012
	Դ [2]	Հ
Համախառն արտաքին պարտավորություններ	**753.6**	**763.0**
ԱՄՀ վարկ	517.6	523.8
ՀՓԻ տեղաբաշխում	135.1	136.5
Այլ վարկեր	100.7	101.9
Այլ պարտավորություններ	0.2	0.8

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*


[2] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

ժամանակաշրջան	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	տոկոսատուփով արժեթղթեր	Ընդամենը	Կենտրոնական բանկի վերակապիտալացման տոկոսատուփով արժեթղթեր	Կենտրոնական բանկի վերակապիտալացման դիսկրետ տոկոսատուփով արժեթղթեր	ՀՀԿԳ-երի միջոցներ հետգնման	ՀՀԿԳ-երի միջոցներ ժամկետային	Ընդամենը	
2011								
Դեկտեմբեր	12953	12953	75721	3418	1	547	79687	**-66735**
2012								
Հունվար	13193	13193	98748	3019	1	549	102316	**-89123**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

ժամկետ	Փողի բազա [1] *(մլն ՀՀ դրամ)*	Շրջանառությունում կանխիկ դրամ *(մլն ՀՀ դրամ)*	Ցպահանջ ավանդներ *(մլն ՀՀ դրամ)*	M1 [2] *(մլն ՀՀ դրամ)*	Ժամկետային ավանդներ *(մլն ՀՀ դրամ)*	M2 [3] *(մլն ՀՀ դրամ)*	Արտարժութային ավանդներ *(մլն ՀՀ դրամ)*	M2X [4] *(մլն ՀՀ դրամ)*	Փողի բազայի [5]	Դրամային [6]
2011										
Դեկտեմբեր	671271	349407	164385	513792	145644	659437	467542	1126978	1.68	1.16
2012										
Հունվար	572232	318965	154751	473716	145677	619394	476707	1096101	1.92	1.18

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունը ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ
700000
630000
560000
490000
420000
350000
280000
210000
140000
70000
0
08
09
10
11
12
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
08
09
10
11
12
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
05
06
07
08
09
10
11
12


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
80
75
70
65
60
55
50
05
06
07
08
09
10
11
12

ՄԵՋՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ[1]


մլն ՀՀ դրամ

ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2005					
Հունվար	116012	85221	115915	128581	270344
Փետրվար	119271	94638	125838	140910	274364
Մարտ	128936	104363	143858	159547	284441
Ապրիլ	134956	110380	150178	175088	300112
Մայիս	147071	114643	162653	184504	313221
Հունիս	156048	113418	160519	179031	313252
Հուլիս	171179	113874	163952	181125	320274
Օգոստոս	179217	120427	169629	188753	341328
Սեպտեմբեր	169620	118534	164207	182421	331579
Հոկտեմբեր	176737	120464	166788	187679	338395
Նոյեմբեր	178230	122015	166267	183754	320928
Դեկտեմբեր	180287	114718	168618	185222	325778
2006					
Հունվար	185468	131650	185806	204679	355656
Փետրվար	190886	143059	192839	218272	361366
Մարտ	193072	141069	194323	223582	366498
Ապրիլ	194586	143008	204559	227432	366925
Մայիս	197027	150645	213062	241345	377374
Հունիս	206023	152618	220634	246385	383631
Հուլիս	206796	150352	215867	239281	379915
Օգոստոս	214133	154951	221071	246660	384808
Սեպտեմբեր	225497	168175	236508	265112	402553
Հոկտեմբեր	232465	170525	241576	274527	410691
Նոյեմբեր	236818	173791	247987	275343	434670
Դեկտեմբեր	254663	182683	260548	302100	447450
2007					
Հունվար	253523	197077	276707	327114	459196
Փետրվար	263366	207464	295595	347463	481447
Մարտ	270952	214914	309714	364025	492266
Ապրիլ	284205	229632	323543	381125	510770
Մայիս	292490	228931	321682	380245	512571
Հունիս	297199	235302	329683	400520	535560
Հուլիս	305469	247836	351040	427962	557142
Օգոստոս	318672	251606	352012	431201	558508
Սեպտեմբեր	325400	254715	359235	435756	580816
Հոկտեմբեր	339653	266948	378895	460689	602135
Նոյեմբեր	368076	290994	405494	496404	634926
Դեկտեմբեր	384664	297346	422026	521285	653542
2008					
Հունվար	392250	305755	428126	531505	660839
Փետրվար	396280	314327	435150	546000	673222
Մարտ	396195	319903	445132	564970	691600
Ապրիլ	414607	323365	447046	576778	709196
Մայիս	416944	323604	445064	581694	718861
Հունիս	427043	330314	447731	587214	727359
Հուլիս	429904	329816	446397	585451	732210
Օգոստոս	431683	328453	447984	585896	743344
Սեպտեմբեր	429876	328389	451533	594253	754798
Հոկտեմբեր	429301	324206	439012	582589	748813
Նոյեմբեր	415176	309368	409129	547698	706618
Դեկտեմբեր	405080	289744	383844	501769	674972


2009					
Հունվար	402806	276832	366847	471560	665140
Փետրվար	402243	243840	325830	405006	640758
Մարտ	397152	231207	321490	386593	650007
Ապրիլ	399982	235346	320128	390113	652823
Մայիս	420043	240067	328718	393508	674555
Հունիս	421822	243352	334131	395154	677520
Հուլիս	438460	248930	352275	413425	713504
Օգոստոս	438305	252494	348232	411990	733892
Սեպտեմբեր	454844	250617	346861	410705	743142
Հոկտեմբեր	457593	251643	350800	411200	759089
Նոյեմբեր	457277	255610	353975	411316	766929
Դեկտեմբեր	461043	257145	353955	413936	776534
2010					
Հունվար	462738	258437	358092	418388	783563
Փետրվար	454323	269379	374263	437056	811039
Մարտ	475719	267405	367280	430786	817586
Ապրիլ	482605	265016	368573	435002	812016
Մայիս	466314	269705	376003	442463	802310
Հունիս	449213	273913	377213	447040	798312
Հուլիս	439047	264195	368049	429184	795194
Օգոստոս	436027	263037	368782	436337	800272
Սեպտեմբեր	433666	265333	371353	442295	811040
Հոկտեմբեր	438188	267273	376190	452635	823746
Նոյեմբեր	448537	269775	384553	461815	836133
Դեկտեմբեր	457333	278650	397438	481111	867833
2011					
Հունվար	468928	283394	397594	488612	879365
Փետրվար	489953	289756	408898	510273	900769
Մարտ	508844	297115	423929	534302	924571
Ապրիլ	516360	301953	430757	538589	942240
Մայիս	512353	305597	436378	548340	967806
Հունիս	537286	306566	442832	557965	984844
Հուլիս	535625	309709	453699	571616	1003282
Օգոստոս	579815	312907	454086	578051	1014568
Սեպտեմբեր	566078	314258	457473	580468	1026427
Հոկտեմբեր	574417	317752	462178	590521	1046747
Նոյեմբեր	582996	319199	466064	597911	1065117
Դեկտեմբեր	604639	321537	477315	616199	1084433
2012					
Հունվար	579873	324411	483183	625076	1096265

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով:*
Ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամայա պարբերականի յուրաքանչյուր տարվա առաջին համարում:
Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով X-12-ARIMA հարթեցման եղանակը:


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները




Բանկային համակարգից դուրս կանխիկ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները



Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները



ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012
	Դ [2]	Հ
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***470635***	***409385***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***200635***	***162846***
Կառավարություն	-66735	-89123
Բանկեր	137020	120020
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	46345	28597
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի ներգրավման սվոփ	0	0
Ավանդներ (-)	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0
ՀՀ ԿԲ կողմից արտարժույթի տրամադրման սվոփ (-)	0	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0
Զուտ այլ ակտիվներ	130350	131949
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***671271***	***572232***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	398777	360151
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	163177	155780
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	102513	48678
Այլ հաշիվներ	6803	7622
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	6715	7561
Այլ հաշիվներ արտարժույթով	88	61
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-61250***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37789***
Կառավարություն	-	-22388
Բանկեր	-	-17000
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	-17749
ավանդներ (-)	-	0
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0
Զուտ այլ ակտիվներ	-	1599
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-99039***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-38626
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-7397
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-53835
Այլ հաշիվներ	-	819
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	846
Այլ հաշիվներ արտարժույթով	-	-27
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	***-***	***-13.0***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-18.8***
Կառավարություն	-	-33.5
Բանկեր	-	-12.4
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	1.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-14.8***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.7
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	-4.5
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-52.5
Այլ հաշիվներ	-	12.0

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) իրենցից ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ-ն հաշվարկված է ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 385.00 դրամ, 1 ՀՓԻ = 1.5403 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.4182 ԱՄՆ դոլար, 1 ՄԲ ֆունտ ստեռլինգ = 1.4511 ԱՄՆ դոլար:

[2] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012
	Դ	Հ[2]
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-422628**	**-378223**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	144795	180008
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-540514	-519958
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-26909	-38273
ԶՆԱ	**1192853**	**1147785**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	64951	60498
Պահանջներ Կառավարության նկատմամբ	147289	143338
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-82338	-82840
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	190864	142343
Պահանջներ ԿԲ նկատմամբ	322531	245320
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ (-)	-131668	-102977
Ներդրումներ	1249805	1263814
Ձեռնարկություններ	727559	760290
Դրամով	156025	156900
Արտարժույթով	568780	600625
Արժեթղթեր	2754	2766
Տնային տնտեսություններ	484476	458685
Դրամով	313857	312846
Արտարժույթով	170619	145839
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13864	20588
Դրամով	1383	1612
Արտարժույթով	12481	18975
Այլ ֆինանսական կազմակերպություններ	23907	24251
Դրամով	18570	18620
Արտարժույթով	5337	5631
Զուտ այլ ակտիվներ	-312766	-318871
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	27663	28771
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	9929	1497
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	-10087	-1106
Ներդրումներ փայաբաժիններում	3007	2283
Միջբանկային պահանջներ	56576	48009
Այլ ակտիվներ	192599	122623
Միջբանկային պարտավորություններ (-)	-55508	-46741
Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր (-)	-5535	-684
Կապիտալ հաշիվներ (-)	-357917	-360503
Այլ պարտավորություններ (-)	-173493	-113020
ԱՎԱՆԴՆԵՐ	**770226**	**769562**
Դրամով ավանդներ	299780	289949
Ցպահանջ ավանդներ	160916	148769
Ժամկետային ավանդներ	138864	141180
Արտարժույթով ավանդներ	470446	479613
Ցպահանջ ավանդներ	124202	118744
Ժամկետային ավանդներ	346244	360870

[1] *2012 թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:*

[2] *Տվյալները նախնական են:*

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012
	Դ	Հ[3]
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**-38749**	**-39205**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	489	381
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-28751	-29600
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-10487	-9985
ԶՆԱ	**56352**	**54665**
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	-5859	-6737
Պահանջներ Կառավարության նկատմամբ	1706	1498
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-7565	-8236
Զուտ պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ[2]	28649	30269
Պահանջներ ավանդային կազմակերպությունների նկատմամբ	34389	38484
Պարտավորություններ ավանդային կազմ.-ների նկատմամբ (-)	-5740	-8215
Տնտեսություն	81659	80251
Ջեռնարկություններ	22298	22411
Դրամով	8558	8563
Արտարժույթով	13730	13848
Արժեթղթեր	10	0
Տնային տնտեսություններ	58985	56325
Դրամով	42775	42200
Արտարժույթով	16210	14125
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	102	1307
Դրամով	93	14
Արտարժույթով	10	1294
Այլ ֆինանսական կազմակերպություններ	273	208
Դրամով	269	208
Արտարժույթով	3	0
Զուտ այլ ակտիվներ	-48097	-49118
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	71	45
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժույթով)	0	0
Արտաքին պարտավորություններ (ոչ փոխարկելի արտարժույթով) (-)	0	0
Ներդրումներ փայաբաժիններում	1678	1678
Պահանջներ վարկային կազմակերպությունների նկատմամբ	2184	2247
Այլ ակտիվներ	5973	4856
Պարտավորություններ վարկային կազմակերպությունների նկատմամբ (-)	-2184	-2247
Թողարկված պարտատոմսեր (-)	-964	-971
Կապիտալ հաշիվներ (-)	-46909	-47195
Այլ պարտավորություններ (-)	-7947	-7531
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**17603**	**15459**
ՀՀ դրամով փոխառություններ	13125	10549
Ցպահանջ փոխառություններ	4	406
Ժամկետային փոխառություններ	13121	10143
Արտարժույթով փոխառություններ	4478	4910
Ցպահանջ փոխառություններ	75	75
Ժամկետային փոխառություններ	4403	4835

[1] 2012 թ. հունվարից ֆինանսական կազմակերպությունների նոր հաշվային պլանի ներդրման արդյունքում տեղի են ունեցել որոշակի կառուցվածքային փոփոխություններ:
[2] Ավանդային կազմակերպություններում ընդգրկված են ՀՀ ԿԲ-ն և առևտրային բանկերը:
[3] Տվյալները նախնական են:

ՀՀ ԱՎԱՆԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ[1]

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2011	2012
	Դ [6]	Հ [6]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***9259***	***-8043***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***1117720***	***1104144***
Կառավարություն	-7643	-35362
Տնտեսություն	1327097	1339990
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	749857	782701
որից՝ կուտակված տոկոսներ	9228	9658
Տնային տնտեսություններ	544074	516362
որից՝ կուտակված տոկոսներ	6314	6634
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	13966	21895
որից՝ կուտակված տոկոսներ	25	99
Այլ ֆինանսական կազմակերպություններ	19200	19032
որից՝ կուտակված տոկոսներ	71	45
Զուտ այլ ակտիվներ	-201735	-200484
ԴՐԱՄԱՅԻՆ ԶԱՆԳՎԱԾ [3]	***659437***	***619394***
ՓՈՂԻ ԶԱՆԳՎԱԾ [4]	***1126978***	***1096101***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	349407	318965
Ցպահանջ ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով [5]	164385	154751
որից՝ կուտակված տոկոսներ	105	107
Ժամկետային ավանդներ և փոխառություններ ՀՀ դրամով	145644	145677
որից՝ կուտակված տոկոսներ	2987	3042
Արտարժույթով ավանդներ և փոխառություններ	467542	476707
Ցպահանջ [5]	122909	116335
որից՝ կուտակված տոկոսներ	41	28
Ժամկետային	344632	360373
որից՝ կուտակված տոկոսներ	5019	5262
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)		
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-17301***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13576***
Կառավարություն	-	-27719
Տնտեսություն	-	12893
Ձեռնարկություններ և կազմակերպություններ	-	32844
որից՝ կուտակված տոկոսներ	-	430
Տնային տնտեսություններ	-	-27712
որից՝ կուտակված տոկոսներ	-	320
